## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 0231 6-00-42, 060-53-00-42 paraqar.armavir@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ու Մ

05 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2021 թվականի N 247-Ա

### ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐԵԼՈՒ, ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի երկրորդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 731-Ն որոշմամբ, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 33-րդ կետով, 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշման պահանջներով, նկատի ունենալով, որ կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները, օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, ինչպես նաև չի գտնվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, շինության զբաղեցրած հողամաս ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի սահմանափակումների կազմում, հիմք ընդունելով շենքի տեխնիկական վիճակի վերաբերյալ եզրակացությունը տրված 25.01.2021թ.-ին «Ա.Ռ.Մ. ՇԻՆ» ՍՊԸ-ի կողմից, հողամասի և շինության հատակագծերը՝ տրված 2021 թվականի փետրվարի 8-ին «ԱՐՏԱՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի կողմից, շինությունը կատարած անձ Կարինե Վահանի Հակոբյանի 2021 թվականի հունվարի 29-ի դիմումը.***որոշում եմ՝***

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի վարչական սահմաններում գտնվող Թաիրով գյուղի Մայրաքաղաքային փողոցի 1-ին փակուղի թիվ 4 հասցեին կից 13,4432 քառակուսի մետր մակերեսով համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի վրա գտնվող 5,81 քառակուսի մետր արտաքին մակերեսով պարիսպը ճանաչել Փարաքար համայնքի սեփականությունը և օրինականացնել՝ համաձայն «ԱՐՏԱՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ–ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագծերի:

2. Հողատարածքի և առկա շինությանը տալ նոր հասցեն, Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզ, Փարաքար համայնք, գյուղ Թաիրով, Մայրաքաղաքային փողոց 1-ին փակուղի 4/1 հողամաս:

3. Հաշվի առնելով, որ կառույցն իրականացվել է Կարինե Վահանի Հակոբյանի կողմից և ընդունվել է առաջարկը՝ գնման նախապատվության իրավունքով ձեռք բերելու

հողամասը և շինությունը, Կարինե Վահանի Հակոբյանին ուղղակի վաճառքով օտարել Արմավիրի մարզ, Փարաքար համայնքի, Թաիրով գյուղի, Մայրաքաղաքային փողոցի 1-ին փակուղի թիվ 4/1 հասցեում գտնվող 0.00134432 հա մակերեսով հողամասն՝ առկա շինություններով:

4. Ինքնակամ կառույցի օրինականացման համար վճարը սահմանվում է յուրաքանչյուր մեկ քառակուսի՝ մետր պարիսպի համար՝ 2600 դրամ, վճարման ենթակա գումարը կազմում է 15 106 (տասնհինգ հազար հարյուր վեց դրամ) ՀՀ դրամ, որը ենթակա է վճարման Փարաքար համայնքի վարչական եկամուտների 900325191154 հաշվեհամարին:

5.Մեկ քառակուսի մետր հողամասի օտարման վճարը՝ 10 513,8 դրամ, որը 13,4432 քառակուսի մետրի համար կկազմի 141 339,116 (հարյուր քառասունմեկ հազար երեք հարյուր երեսունինը դրամ հարյուր տասնվեց լումա) ՀՀ դրամ, որը ենթակա է վճարման Փարաքար համայնքի ֆոնդային եկամուտների 900325191139 հաշվեհամարին:

6. Սույն որոշումից բխող գույքային իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանման կողմից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԴԱՎԻԹ ՄԻՆԱՍՅԱՆ

2021 թ. նոյեմբերի 05
գ.Փարաքար

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 0231 6-00-42, 060-53-00-42 paraqar.armavir@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

05 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2021թվականի N 248-Ա

## ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԻՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշմամբ, նկատի ունենալով, որ հողամասն ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի սահմանափակումների ցանկում, հիմք ընդունելով անշարժ գույքի սեփականության վկայականը N 1499390 տրված 20 մայիսի 2005 թվականին, հողամասի հատակագիծը, տրված «Կարեն Մաչանյան» ԱՁ-ի կողմից, և Խանում Ալավերդու Հովհաննիսյանի 2021 թվականի հունվարի 26-ի դիմումը. *Որոշում եմ՝*

1. Խանում Ալավերդու Հովհաննիսյանին վարձակալության իրավունքով պատկանող Արմավիրի մարզի Փարաքար գյուղում գտնվող (անշարժ գույքի վարձակալության իրավունքի գրանցման վկայական N 1499390 տրված 20.05.2005թ.-ին) բնակավայրերի նպատակային նշանակության 0.0033 հա մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը փոխել որպես բնակելի կառուցապատման հող:
2. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի հողային հաշվեկշռում կատարել փոփոխություն, սույն՝ 0.0033 հա մակերեսով հողամասը հանել բնակավայրերի արտադրական հողերի հաշվեկշռից և ներառել բնակավայրերի բնակելի կառուցապատման հողերի հաշվեկշռում:
3. Հողամասին տալ հասցե Արմավիրի մարզ Փարաքար համայնք, գյուղ Թաիրով Վ. Մամիկոնյան փողոց 1-ին նրբանցք N 16 բնակելի տուն:
4. Խանում Ալավերդու Հովհաննիսյանին սեփականության իրավունքով պատկանող Արմավիրի մարզ Փարաքար համայնքի, Թաիրով գյուղի Վ. Մամիկոնյան փողոցի 1-ին նրբանցքի N 16 հասցեում գտնվող 16,9 քառակուսի մետր ընդհանուր մակերեսով պահեստի գործառնական նշանակությունը փոխել, որպես բնակելի տուն:
5. Սույն որոշումից բխող գույքային իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանման կողմից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԴԱՎԻԹ ՄԻՆԱՍՅԱՆ

2021 թ. նոյեմբերի 05
գ.Փարաքար

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 0231 6-00-42, 060-53-00-42 paraqar.armavir@mta.gov.am

### Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
05 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2021թվականի N 249-Ա

### ՆԵԼԼԻ ՎԱՆՈՒՇԻ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԿԱՏԱՐԱԾ ԻՆՔՆԱԿԱՄ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 4-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 11-րդ և 12-րդ կետերով, նկատի ունենալով, որ հողամասն ընգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի սահմանափակումների կազմում, կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները, օրենքով պահպանող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին և առողջությանը, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, հիմք ընդունելով «ԽԱՉՎԱՀԱՆ» ՍՊԸ-ի կողմից 2021 թվականի հոկտեմբերի 29-ին տրված շենքի տեխնիկական վիճակի վերաբերյալ դրական եզրակացությունը և սեփականատեր Նելլի Վանուշի Հայրապետյանի 2021 թվականի նոյեմբերի 1-ի դիմումը. ***որոշում եմ՝***

1. Օրինականացնել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Փարաքար գյուղի Մուրացանի փողոց թիվ 22 հասցեում գտնվող Նելլի Վանուշի Հայրապետյանին սեփականության իրավունքով պատկանող 04-094-0109-0010 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի վրա կառուցված 90.6 քառակուսի մետր արտաքին մակերեսով բնակելի տունը, 9.3 քառակուսի մետր մակերեսով կաթսայատունը, համաձայն համապատասխան որակավորում ունեցող անձի՝ «Ավագ Ավագյան Գագիկի» Ա/Ձ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագծի:
2. Ինքնակամ կառույցի օրինականացման համար վճարը 1 քառակուսի մետր բնակելի տան համար կազմում է 2316 դրամ, 1 քառակուսի մետր կաթսայատան համար՝ 1389.6 դրամ, վճարման ենթակա ընդհանուր գումարը կազմում է 222 752,88 (երկու հարյուր քսաներկու հազար յոթ հարյուր հիսուներկու դրամ ութսունութ լումա) ՀՀ դրամ:
3. Օրինականացման համար սահմանված վճարը որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում պետք է վճարվի Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության գործառական վարչության Փարաքար համայնքի 900325191154 հաշվեհամարին, չվճարելու դեպքում որոշումը համարել ուժը կորցրած:
4. Սույն որոշումից բխող գույքային իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԴԱՎԻԹ ՄԻՆԱՍՅԱՆ

2021թ. նոյեմբերի 05
գ.Փարաքար

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 0231 6-00-42, 060-53-00-42 paraqar.armavir@mta.gov.am

**Ո Ր Ո Շ Ու Մ**

05 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2021թվականի N 250-Ա

### ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐԵԼՈՒ, ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի երկրորդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 731-Ն որոշմամբ, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 33-րդ կետով, 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշման պահանջներով, նկատի ունենալով, որ կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները, օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, ինչպես նաև չի գտնվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, շինության զբաղեցրած հողամաս ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի սահմանափակումների կազմում, հիմք ընդունելով ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից տրված N Կ-04112021-04-0035 կասեցման որոշումը, շենքի տեխնիկական վիճակի վերաբերյալ եզրակացությունը տրված 06.06.2021թ.-ին «ԽԱՉՎԱՀԱՆ» ՍՊԸ-ի կողմից, հողամասի և շինության հատակագծերը՝ տրված 2021 թվականի հունիսի 26-ին «ԿԱՐԵՆ ՄԱՉԱՆՅԱՆ» Ա/Ձ-ի կողմից, շինությունը կատարած անձ Վահագն Հարությունի Պողոսյանի 2021 թվականի հունիսի 16-ի դիմումը. *Որոշում եմ՝*

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի վարչական սահմաններում գտնվող Երևանյան փողոցի 115 հասցեում 48 քառակուսի մետր մակերեսով համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի վրա գտնվող 48 քառակուսի մետր արտաքին մակերեսով բնակելի տան նկուղը ճանաչել Փարաքար համայնքի սեփականությունը և օրինականացնել՝ համաձայն «ԿԱՐԵՆ ՄԱՉԱՆՅԱՆ» Ա/Ձ –ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագծերի:

2. Հողատարածքի և առկա շինության հասցեն, թողնել անփոփոխ Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզ, Փարաքար համայնք, գյուղ Փարաքար, Երևանյան փողոց թիվ 115 կիսակառույց բնակելի տուն:

3. Հաշվի առնելով, որ կառույցն իրականացվել է Վահագն Հարությունի Պողոսյանի կողմից և ընդունվել է առաջարկը՝ գնման նախապատվության իրավունքով ձեռք բերելու հողամասը և շինությունը, Վահագն Հարությունի Պողոսյանին ուղղակի վաճառքով օտարել Արմավիրի մարզ, Փարաքար համայնքի, Փարաքար գյուղի, Երևանյան փողոցի թիվ 115 հասցեում գտնվող 0.0048 հա մակերեսով հողամասն՝ առկա շինություններով:

4. Ինքնակամ կառույցի օրինականացման համար վճարը սահմանվում է յուրաքանչյուր մեկ քառակուսի մետր կիսակառույց բնակելի տան համար՝ 6948 դրամ, վճարման ենթակա գումարը կազմում է 333 504 (երեք հարյուր երեսուներեք հազար հինգ հարյուր չորս դրամ) ՀՀ դրամ, որը ենթակա է վճարման Փարաքար համայնքի վարչական եկամուտների 900325191154 հաշվեհամարին:
5. Մեկ քառակուսի մետր հողամասի օտարման վճարը՝ 6834,3 դրամ, որը 48 քառակուսի մետրի համար կկազմի 328 046,40 (երեք հարյուր քսանութ հազար քառասունվեց դրամ քառասուն լումա) ՀՀ դրամ, որը ենթակա է վճարման Փարաքար համայնքի ֆոնդային եկամուտների 900325191139 հաշվեհամարին:
6. Սույն որոշումից բխող գույքային իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանման կողմից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԴԱՎԻԹ ՄԻՆԱՍՅԱՆ

2021 թ. նոյեմբերի 05
գ.Փարաքար

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 0231 6-00-42, 060-53-00-42 paraqar.armavir@mta.gov.am

**Ո Ր Ո Շ Ու Մ**

09 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2021թվականի N 251-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՓԱՐԱՔԱՐԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 25-Ի ԹԻՎ 33 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածով, «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և հիմք ընդունելով Սուկո Զահարի Աբասյանի 2021 թվականի նոյեմբերի 8-ի դիմումը. ***որոշում եմ՝***

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար գյուղական համայնքի ղեկավարի 2011 թվականի հուլիսի 25-ի «Ասյա, Սուկո,Մանվել և Սամվել Աբասյանների բնակելի տան նկատմամբ գույքային իրավունքները վերականգնելու մասին» N 33 որոշման 1-ին կետը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ .

«1. Վերականգնել Արմավիրի մարզի Փարաքար համայնքի վարչական սահմաններում գտնվող՝ Փարաքար գյուղի Վ.Սարգսյան 1-ին փողոցի թիվ 4 բնակելի տան և 700 քառակուսի մետր մակերեսով հողամասի նկատմամբ Ասյա Աբասյանի, Սուկո Աբասյանի, Մանվել Աբասյանի և Սամվել Աբասյանի համատեղ սեփականության իրավունքը: Հողամասի սահմանների վերաբերյալ հիմք ընդունել անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցման 2011 թվականի հուլիսի 28-ի N 2828834 վկայականի «հողամասի հատակագիծ» բաժնի տվյալները և Փարաքար համայնքի ղեկավարի կողմից 2018 թվականի ապրիլի 4-ին հաստատված հողամասի հատակագիծը:»:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ԴԱՎԻԹ ՄԻՆԱՍՅԱՆ**

2021 թ. նոյեմբերի 09

գ.Փարաքար

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 0231 6-00-42, 060-53-00-42 paraqar.armavir@mta.gov.am

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

9 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2021 թվականի N 253-Ա

***ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ԵՎ ՆՇՎԱԾ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԱՌԿԱ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ԱԼԻՆԱ ԿԱՌԼԵՆԻ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 72-րդ հոդվածի 2-րդ կետով, Հայաստանի Հանրապետության հողային օրնսգրքի 64-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշմամբ սահմանված կարգով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի նախագահի տեղակալի 2021 թվականի սեպտեմբերի 16-ի N 06/11.2/8477-21 գրությունը, Հայաստանի Հանրապետության համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի N 1/փ-277 դրական եզրակացությունը, Փարաքար համայնքի ավագանու 2021 թվականի նոյեմբերի 8-ի թիվ 60-Ա որոշումը. ***Փարաքար համայնքի ավագանին ո ր ո շ ու մ է՝***

1. Փարաքար համայնքի գլխավոր հատակագծում կատարել փոփոխություն և համայնքային սեփականություն հանդիսացող 04-094-0017-0022 կադաստրային ծածկագրով, 0.0513 հա մակերեսով կոմունալ ենթակառուցվածքների նպատակային նշանակության հողամասի նպատակային նշանակությունը փոխել որպես բնակավայրերի հող, գործառական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման հող: Փարաքար համայնքի հողային հաշվեկշռում կատարել համապատասխան փոփոխություն:
2. 0.0513 հա մակերեսով բնակելի կառուցապատման հողամասը և առկա շինությունը սեփականության իրավունքով՝ անհատույց տրամադրել Փարաքար համայնքի բնակիչ Ալինա Կառլենի Կարապետյանին, ով հանդիսանում է 2020 թվականի 44-օրյա պատերազմում զոհված կամավորական Էդիկ Կարապետյանի այրին և զոհված ժամկետային զինծառայող Արմեն Էդիկի Կարապետյանի մայրը:
3. Նշված հողամասին՝ առկա շինությամբ տալ հասցե. Արմավիրի մարզ, Փարաքար համայնք, գյուղ Թաիրով, Մերձավանի խճուղի թիվ 4/2 հողամաս:
4. Առաջարկել համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին (Մ.Քեյանին)՝ իրականացնել սույն որոշումից բխող գործառույթները:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԴԱՎԻԹ ՄԻՆԱՍՅԱՆ

2021թ. նոյեմբերի 9
գ.Փարաքար

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 0231 6-00-42, 060-53-00-42 paraqar.armavir@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

## 11 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2021թվականի N 254-Ա

## ԱՆԻ ՊԵՏՐՈՍԻ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԿԱՏԱՐԱԾ ԻՆՔՆԱԿԱՄ ՇԻՆՈՒԹՅԱՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 4-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 11-րդ և 12-րդ կետերով, նկատի ունենալով, որ հողամասն ընգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի սահմանափակումների կազմում, կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները, օրենքով պահպանող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին և առողջությանը, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, հիմք ընդունելով «ՀԱԲՇԻՆ ՆԱԽԱԳԻԾ» ՍՊԸ-ի կողմից 2021 թվականի նոյեմբերի 3-ին տրված շենքի տեխնիկական վիճակի վերաբերյալ դրական եզրակացությունը և սեփականատեր Անի Պետրոսի Կարապետյանի 2021 թվականի հոկտեմբերի 26-ի դիմումը. *որոշում եմ՝*

1. Օրինականացնել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Թաիրով գյուղի Կորյունի փողոց 1-ին նրբանցք թիվ 2 հասցեում գտնվող Անի Պետրոսի Կարապետյանին սեփականության իրավունքով պատկանող 04-094-0149-0031 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի վրա կառուցված 243.9 քառակուսի մետր արտաքին մակերեսով բնակելի տունը, համաձայն համապատասխան որակավորում ունեցող անձի՝ «Մալխասյանս փաստաբանական կենտրոն» ՍՊԸ-ի կողմից տրված հողամասի և շինության հատակագծի: 2. Ինքնակամ կառույցի օրինականացման համար վճարը 1 քառակուսի մետր բնակելի տան համար կազմում է 2725 դրամ, վճարման ենթակա ընդհանուր գումարը կազմում է 664 627,5 (վեց հարյուր վաթսունչորս հազար վեց հարյուր քսանյոթ դրամ հիսուն լումա) ՀՀ դրամ:

3. Օրինականացման համար սահմանված վճարը որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում պետք է վճարվի Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության գործառական վարչության Փարաքար համայնքի 900325191154 հաշվեհամարին, չվճարելու դեպքում որոշումը համարել ուժը կորցրած:

4. Սույն որոշումից բխող գույքային իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԵՏԻՍՅԱՆ

2021 թ.նոյեմբերի 11
գ.Փարաքար

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 0231 6-00-42, 060-53-00-42 paraqar.armavir@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2021 թվականի N 255-Ա

## ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 24-ի N 1746-Ն որոշմամբ Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ, ՀՀ Անշարժ գույքի հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքի մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին օրենքով, ընդունված 2019թ.-ի նոյեմբերի 19-ին N ՀՕ-225-Ն և Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքարի գյուղական համայնքի ավագանու 2012 թվականի մարտի 28-ի «Փարաքարի գյուղական համայնքի (բնակավայրի) պարզեցված գլխավոր հատակագիծը հաստատելու մասին» N 15-Ն որոշմամբ, հիմք ընդունելով սեփականատեր Հրանտ Լևոնի Սարդարյանի 2021 թվականի հոկտեմբերի 28-ի դիմումը.***ո ր ո շ ու մ   եմ՝***

1. Հրանտ Լևոնի Սարդարյանին սեփականության իրավունքով պատկանող (սեփականության իրավունքի պետական գրանցման վկայական 23072020-04-0075), Արմավիրի մարզի Փարաքար համայնքի, Թաիրով գյուղում գտնվող 04-094-0406-0086 կադաստրային ծածկագրով գյուղատնտեսական նշանակության 0.04 հա մակերեսով հողամասը, գործառնական նշանակությունը կամ հողատեսքը խաղող, (գոտին՝ Ուրց Կոտայք-Շամիրամ, 3-րդ կարգի խաղող՝ կադաստրային արժեքը՝ մեկ քառակուսի մետրի համար 373 դրամ) փոխադրել բնակավայրերի հողերի կատեգորիա, որպես բնակելի կառուցապատման հող: Բնակելի տուն և օժանդակ շինություններ կառուցելու համար:
2. Փոփոխվող հողի կադաստրային արժեքների տարբերությունը (1 քառակուսի մետրին խաղողի համար 6461,3դրամ,) 400 քառակուսի մետրի համար կազմում է 2 584 520 (երկու միլիոն հինգ հարյուր ութանասունչորս հազար հինգ հարյուր քսան դրամ) ՀՀ դրամ, ինչը 60-օրյա ժամկետում պետք է վճարել Փարաքարի համայնքային բյուջե՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության գործառական վարչության 900325191139 հաշվեհամարին, չվճարելու դեպքում որոշումը ճանաչել ուժը կորցրած:
3. Հողամասին տալ հասցե. Արմավիրի մարզ, Փարաքար համայնք, գ.Թաիրով Սայաթ-Նովա փողոց թիվ 19 հողամաս:

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք

ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 0231 6-00-42, 060-53-00-42 paraqar.armavir@mta.gov.am

### Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2021 թվականի N 255-Ա

### ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 24-ի N 1746-Ն որոշմամբ Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ, ՀՀ Անշարժ գույքի հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքի մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին օրենքով, ընդունված 2019թ.-ի նոյեմբերի 19-ին N ՀՕ-225-Ն և Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքարի գյուղական համայնքի ավագանու 2012 թվականի մարտի 28-ի «Փարաքարի գյուղական համայնքի (բնակավայրի) պարզեցված գլխավոր հատակագիծը հաստատելու մասին» N 15-Ն որոշմամբ, հիմք ընդունելով սեփականատեր Հրանտ Լևոնի Սարդարյանի 2021 թվականի հոկտեմբերի 28-ի դիմումը.***ո ր ո շ ու մ   եմ՝***

1. Հրանտ Լևոնի Սարդարյանին սեփականության իրավունքով պատկանող (սեփականության իրավունքի պետական գրանցման վկայական 23072020-04-0075), Արմավիրի մարզի Փարաքար համայնքի, Թաիրով գյուղում գտնվող 04-094-0406-0086 կադաստրային ծածկագրով գյուղատնտեսական նշանակության 0.04 հա մակերեսով հողամասը, գործառնական նշանակությունը կամ հողատեսքը խաղող, (գոտին՝ Ուրց Կոտայք-Շամիրամ, 3-րդ կարգի խաղող՝ կադաստրային արժեքը՝ մեկ քառակուսի մետրի համար 373 դրամ) փոխադրել բնակավայրերի հողերի կատեգորիա, որպես բնակելի կառուցապատման հող: Բնակելի տուն և օժանդակ շինություններ կառուցելու համար:

2. Փոփոխվող հողի կադաստրային արժեքների տարբերությունը (1 քառակուսի մետրին խաղողի համար 6461,3դրամ,) 400 քառակուսի մետրի համար կազմում է 2 584 520 (երկու միլիոն հինգ հարյուր ութանասունչորս հազար հինգ հարյուր քսան դրամ) ՀՀ դրամ, ինչը 60-օրյա ժամկետում պետք է վճարել Փարաքարի համայնքային բյուջե՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության գործառական վարչության 900325191139 հաշվեհամարին, չվճարելու դեպքում որոշումը ճանաչել ուժը կորցրած:

3. Հողամասին տալ հասցե. Արմավիրի մարզ, Փարաքար համայնք, գ.Թաիրով Սայաթ-Նովա փողոց թիվ 19 հողամաս:

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 0231 6-00-42, 060-53-00-42 paraqar.armavir@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
11 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2021թվականի N 256-Ա

## ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 24-ի N 1746-Ն որոշմամբ Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ, ՀՀ Անշարժ գույքի հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքի մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին օրենքով, ընդունված 2019թ.-ի նոյեմբերի 19-ին N ՀՕ-225-Ն և Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքարի գյուղական համայնքի ավագանու 2012 թվականի մարտի 28-ի «Փարաքարի գյուղական համայնքի (բնակավայրի) պարզեցված գլխավոր հատակագիծը հաստատելու մասին» N 15-Ն որոշմամբ, հիմք ընդունելով սեփականատեր Հրանտ Լևոնի Սարդարյանի 2021 թվականի հոկտեմբերի 28-ի դիմումը.***որոշում եմ՝***

1. Հրանտ Լևոնի Սարդարյանին սեփականության իրավունքով պատկանող (սեփականության իրավունքի պետական գրանցման վկայական 23072020-04-0074), Արմավիրի մարզի Փարաքար համայնքի, Թաիրով գյուղում գտնվող 04-094-0406-0087 կադաստրային ծածկագրով գյուղատնտեսական նշանակության 0.04 հա մակերեսով հողամասը, գործառնական նշանակությունը կամ հողատեսքը խաղող, (գոտին՝ Ուրց Կոտայք-Շամիրամ, 3-րդ կարգի խաղող՝ կադաստրային արժեքը՝ մեկ քառակուսի մետրի համար 373 դրամ) փոխադրել բնակավայրերի հողերի կատեգորիա, որպես բնակելի կառուցապատման հող: Բնակելի տուն և օժանդակ շինություններ կառուցելու համար:
2. Փոփոխվող հողի կադաստրային արժեքների տարբերությունը (1 քառակուսի մետրին խաղողի համար 6461,3դրամ,) 400 քառակուսի մետրի համար կազմում է 2 584 520 (երկու միլիոն հինգ հարյուր ութանասունչորս հազար հինգ հարյուր քսան դրամ) ՀՀ դրամ, ինչը 60-օրյա ժամկետում պետք է վճարել Փարաքարի համայնքային բյուջե՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության գործառական վարչության 900325191139 հաշվեհամարին, չվճարելու դեպքում որոշումը ճանաչել ուժը կորցրած:

3. Հողամասին տալ հասցե. Արմավիրի մարզ, Փարաքար համայնք, գ.Թաիրով Սայաթ-Նովա փողոց թիվ 17 հողամաս:

4. Սույն որոշումից բխող գույքային իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանման կողմից:

5. Հետագա կառուցապատումն իրականացնել Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության բնագավառի օրենսդրության պահանջներին համապատասխան, նախապես համաձայնեցված և հաստատված նախագծային փաստաթղթերի հիման վրա Փարաքար համայնքի ղեկավարի կողմից տրված շինարարության թույլտվության համաձայն:

6.Սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո երկամսյա ժամկետում կարող է բողոքարկվել վարչական կարգով Փարաքար համայնքի ղեկավարին կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ ՏԻԳՐԱՆ ԱՎԵՏԻՍՅԱՆ

2021 թ. նոյեմբերի 11

գ.Փարաքար

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 0231 6-00-42, 060-53-00-42 paraqar.armavir@mta.gov.am

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

12 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2021թվականի N 257-Ա

### ՀԱՍՑԵՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 50-րդ կետով, հիմք ընդունելով հողամասի բաժանման սխեման՝ տրված 2021 թվականի հոկտեմբերի 21-ին «Մալխասյան փաստաբանական կենտրոն» ՍՊԸ-ի կողմից, և սեփականատեր՝ «ԱՍ ՀՈԼԴԻՆԳ» ՍՊԸ-ի լիազոր անձի Արսեն Բենիկի Մեսրոպյանի 2021 թվականի նոյեմբերի 01-ի դիմումը. ***որոշում եմ՝***

1. Արմավիրի մարզի Փարաքար համայնքի վարչական սահմաններում գտնվող «ԱՍ ՀՈԼԴԻՆԳ» ՍՊԸ-ին սեփականության և վարձակալության իրավունքով պատկանող 04-094-0012-0060 կադաստրային ծածկագրով արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության, արդյունաբերական օբյեկտների գործառնական նշանակության հողամասի կողմ 1-ին (Բաժանում 1)՝ 1.5333 հա մակերեսով սեփականության և 0.19055988 հա վարձակալության իրավունքով պատկանող հողամասերին տալ հասցե. Արմավիրի մարզ, Փարաքար համայնք, գյուղ Թաիրով, Մայրաքաղաքային փողոց N 37/2 հողամաս:
2. Նույն հողատարածքի՝ կողմ 2-ին (Բաժանում 2)՝ 0.9901 հա մակերեսով սեփականության և 0.07286877 հա վարձակալության իրավունքով պատկանող հողամասերին տալ հասցե. Արմավիրի մարզ, Փարաքար համայնք, գյուղ Թաիրով, Մայրաքաղաքային փողոց N 27/2 հողամաս:
3. Նույն հողատարածքի՝ կողմ 3-ին (Բաժանում 3)՝ 1.9530 հա մակերեսով սեփականության, 0.09048402 և 0.34177 հա վարձակալության իրավունքով պատկանող հողամասերին տալ հասցե. Արմավիրի մարզ, Փարաքար համայնք, գյուղ Թաիրով, Մայրաքաղաքային փողոց N 15/1 հողամաս:
4. Սույն որոշումից բխող գույքային իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանումում:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ՝** **ՏԻԳՐԱՆ ԱՎԵՏԻՍՅԱՆ**

2021թ. նոյեմբերի 12

գ.Փարաքար

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 0231 6-00-42, 060-53-00-42 paraqar.armavir@mta.gov.am

### Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
16 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2021 թվականի N 258-Ա

### ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 50-րդ կետով, նկատի ունենալով, որ կառույցն իրականացվել է մինչև 2001 թվականի մայիսի 15-ը՝ 1993-1994 թվականներին, հողամասն ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանափակումների ցանկում, կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները, օրենքով պահպանող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին և առողջությանը, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, հիմք ընդունելով հողամասի և շինությունների հատակագիծը, տրված 2021 թվականի հոկտեմբերի 8-ին «Կարեն Մաչանյան» Ա/Ձ-ի կողմից, Հայաստանի Հանրապետության ժողովրդական դեպուտատների Էջմիածնի շրջանային խորհրդի գործադիր կոմիտեի 1990 թվականի սեպտեմբերի 24-ի հրամանը, սեփականատեր Յուրիկ Ռաֆիկի Օհանովի 2021 թվականի սեպտեմբերի 1-ի լիազորագիրը և լիազոր անձ Ռոբերտ Ալեքսեյի Բաղիրյանի 2021 թվականի նոյեմբերի 15-ի դիմումը. *որոշում եմ՝*

1. Վերականգնել Արմավիրի մարզի Փարաքար գյուղում Յուրիկ Ռաֆիկի Օհանովի (ծնված՝ 01.10.1960 թ.) գույքային իրավունքները՝ ճանաչել նրա սեփականության իրավունքը 04-094-0002-0003 կադաստրային ծածկագրով 0.07 հա մակերեսով տնամերձ հողամասի, հողամասին կից 0.0078 հա հողատարածքի և այդ տնամերձ հողամասում կառուցած շինությունների նկատմամբ՝ համաձայն հողամասի և շինությունների հատակագծի, տրված «Կարեն Մաչանյան» Ա/Ձ-ի կողմից ըստ որակավորման թիվ 0244 վկայականի: Վերականգնումը կատարվում է անհատույց սեփականության իրավունքով:
2. Բնակելի տանը և հողատարածքին տրամադրել հասցե. Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզ, գյուղ Փարաքար, Արցախի թաղամաս, 4-րդ փողոց թիվ 13 բնակելի տուն:
3. Սույն որոշումից բխող գույքային իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանման կողմից:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Պ/Կ ՏԻԳՐԱՆ ԱՎԵՏԻՍՅԱՆ

2021 թ. նոյեմբերի 16
գ.Փարաքար

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 0231 6-00-42, 060-53-00-42 paraqar.armavir@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2021 թվականի N 259-Ա

## ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավունքն հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 50-րդ կետով նկատի ունենալով, որ կառույցն իրականացվել է մինչև 2001 թվականի մայիսի 15-ը՝ 2000 թվականին, հողամասը ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանափակումների կազմում, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ, հիմք ընդունելով շենքի տեխնիկական վիճակի վերաբերյալ դրական եզրակացությունը, տրված 2021 թվականի նոյեմբերի 12-ին «Հաբշին նախագիծ» ՍՊԸ –ի կողմից, Արմեն Վազգենի Նիկողոսյանի 2021 թվականի նոյեմբերի 16-ի. *որոշում եմ՝*

1. Վերականգնել Արմավիրի մարզի Փարաքարի գյուղական համայնքի Թաիրով գյուղում Արմեն Վազգենի Նիկողոսյանի (ծնված 04.06.1973 թ. ) գույքային իրավունքը՝ ճանաչել նրա սեփականության իրավունքը 35.7 քառակուսի մետր բնակավայրեի բնակելի կառուցապատման հողամասի և այդ հողամասում կառուցած բնակելի տան նկատմամբ: Սեփականության իրավունքը՝ճանաչել համաձայն հողամասի և շինությունների հատակագծերի, տրված 2021 թվականի սեպտեմբերի 25-ին «Մալխասյանց փաստաբանական կենտրոն» ՍՊԸ կողմից: Վերականգնումը կատարվում է անհատույց սեփականության իրավունքով:
2. Բնակելի տանը և հողատարածքին տրամադրել հասցեն. Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզ, գյուղ Թաիրով, Վ.Մամիկոնյան փողոց 3-րդ նրբանցք թիվ 12 բնակելի տուն:
3. Սույն որոշումից բխող գույքային իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի մարզերի միավորված ստորաբաժանման կողմից:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Պ/Կ ՏԻԳՐԱՆ ԱՎԵՏԻՍՅԱՆ

2021 թ. նոյեմբերի 22
գ.Փարաքար

5. Հետագա կառուցապատումն իրականացնել Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության բնագավառի օրենսդրության պահանջներին համապատասխան, նախապես համաձայնեցված և հաստատված նախագծային փաստաթղթերի հիման վրա Փարաքար համայնքի ղեկավարի կողմից տրված շինարարության թույլտվության համաձայն:
6.Սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո երկամսյա ժամկետում կարող է բողոքարկվել վարչական կարգով Փարաքար համայնքի ղեկավարին կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Պ/Կ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԵՏԻՍՅԱՆ

2021 թ. նոյեմբերի 23

գ.Փարաքար

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 0231 6-00-42, 060-53-00-42 paraqar.armavir@mta.gov.am

**Ո Ր Ո Շ Ու Մ**

23 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2021թվականի N 261-Ա

ԱՐՄԱՆ ԲԵԳԼԱՐԻ ԱՂԵԿՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԿԱՏԱՐԱԾ ԻՆՔՆԱԿԱՄ ՇԻՆՈՒԹՅԱՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 4-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 11-րդ և 12-րդ կետերով, նկատի ունենալով, որ հողամասն ընգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի սահմանափակումների կազմում, կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները, օրենքով պահպանող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին և առողջությանը, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, հիմք ընդունելով «ԽԱՉՎԱՀԱՆ» ՍՊԸ-ի կողմից 2021 թվականի նոյեմբերի 12-ին տրված շենքի տեխնիկական վիճակի վերաբերյալ դրական եզրակացությունը և սեփականատեր Արման Բեգլարի Աղեկյանի 2021 թվականի նոյեմբերի 18-ի դիմումը. ***որոշում եմ՝***

1. Օրինականացնել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Թաիրով գյուղի Խ. Աբովյան փողոցի 1-ին նրբանցք թիվ 1 հասցեում գտնվող Արման Բեգլարի Աղեկյանին սեփականության իրավունքով պատկանող 04-094-0079-0089 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի վրա կառուցված 120.9 քառակուսի մետր արտաքին մակերեսով բնակելի տունը, համաձայն համապատասխան որակավորում ունեցող անձի՝ «Ավագ Ավագյան Գագիկի» Ա/Ձ-ի կողմից տրված հողամասի և շինության հատակագծի:
2. Ինքնակամ կառույցի օրինականացման համար վճարը 1 քառակուսի մետր բնակելի տան համար կազմում է 2316 դրամ, վճարման ենթակա ընդհանուր գումարը կազմում է 280 004,4 (երկու հարյուր ութսուն հազար չորս դրամ քառասուն լումա) ՀՀ դրամ:
3. Օրինականացման համար սահմանված վճարը որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում պետք է վճարվի Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության գործառական վարչության Փարաքար համայնքի 900325191154 հաշվեհամարին, չվճարելու դեպքում որոշումը համարել ուժը կորցրած:
4. Սույն որոշումից բխող գույքային իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանումում:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Պ/Կ՝** **ՏԻԳՐԱՆ ԱՎԵՏԻՍՅԱՆ**

2021 թ. նոյեմբերի 23
գ.Փարաքար

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 0231 6-00-42, 060-53-00-42 paraqar.armavir@mta.gov.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

23 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2021 թվականի N 262-Ա

## ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԻՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքարի գյուղական համայնքի ավագանու 2012 թվականի մարտի 28-ի «Փարաքարի գյուղական համայնքի (բնակավայրի) պարզեցված գլխավոր հատակագիծը հաստատելու մասին» 15-Ն որոշմամբ, նկատի ունենալով, որ հողամասն ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի սահմանափակումների ցանկում, հիմք ընդունելով հողամասի հատակագիծը, տրված «Արմեն Դավթյան» Ա/Ձ-ի կողմից, սեփականության իրավունքի գրանցման թիվ 1466081 վկայականը, տրված 27.04.2005 թվականին, Փարաքարի համայնքապետարանի քաղաքաշինության, հողօգտագործման և ընդհանուր բաժնի կողմից տրված 2021 թվական նոյեմբերի 23-ի եզրակացությունը և Նորիկ Երջանիկի Գրիգորյանի 2021 թվականի հունվարի 27-ի դիմումը. ***Որոշում եմ՝***

1. Նորիկ Երջանիկի Գրիգորյանին վարձակալության իրավունքով պատկանող Արմավիրի մարզի Փարաքար գյուղում բնակավայրերի նպատակային նշանակության հողերի գոտում գտնվող 04-094-0109-0045 կադաստրային ծածկագրով (նախկինում 04-094-107-003 կադաստրային համարով) 0.00825 հա մակերեսով հողամասի գործառնական նշանակությանը փոխել որպես բնակավայրերի հասարակական կառուցապատման հող:
2. Նորիկ Երջանիկի Գրիգորյանին սեփականության իրավունքով պատկանող 04-094-0109-0045 կադաստրային ծածկագրով հողամասի սահմաններում առկա շինության նպատակային և գործառնական նշանակությունը փոխել, որպես հասարակական նշանակության շինություն՝ ավտոտեխսպասարկման կետ:
3. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի հողային հաշվեկշռում կատարել փոփոխություն, սույն՝ 0.00825 հա մակերեսով հողամասը ներառել բնակավայրի հասարակական կառուցապատման հողերի հաշվեկշռում:
4. Հողամասին և շինությանը տալ հասցե. Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզ, Փարաքար համայնք, գյուղ Փարաքար, Երևանյան փողոց N 141 ավտոտեխսպասարկման կետ:
5. Սույն որոշումից բխող գույքային իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանման կողմից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Պ/Կ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԵՏԻՍՅԱՆ**

2021թ. նոյեմբերի 23

գ.Փարաքար

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 0231 6-00-42, 060-53-00-42 paraqar.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
25 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2021 թվականի N 264-Ա

ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 258-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 4-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 8-րդ կետով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 50-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածով, նկատի ունենալով, որ կառույցն իրականացվել է մինչև 2001 թվականի մայիսի 15-ը՝ 1993-1994 թվականներին, հողամասն ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանափակումների ցանկում, կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները, օրենքով պահպանող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին և առողջությանը, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, հիմք ընդունելով հողամասի և շինությունների հատակագիծը, տրված 2021 թվականի հոկտեմբերի 8-ին «Կարեն Մաչանյան» Ա/Ձ-ի կողմից, Հայաստանի Հանրապետության ժողովրդական դեպուտատների էջմիածնի շրջանային խորհրդի գործադիր կոմիտեի 1990 թվականի սեպտեմբերի 24-ի հրամանը, Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի 2021 թվականի նոյեմբերի 11-ի «Գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին» N Կ- 19112021-04-0142 որոշումը, սեփականատեր Յուրիկ Ռաֆիկի Օհանովի 2021 թվականի սեպտեմբերի 1-ի լիազորագիրը և լիազոր անձ Ռոբերտ Ալեքսեյի Բաղիրյանի 2021 թվականի նոյեմբերի 15-ի դիմումը. *ո ր ո շ ու մ ե մ՝*

1. Վերականգնել Արմավիրի մարզի Փարաքար գյուղում Յուրիկ Ռաֆիկի Օհանովի (ծնված՝ 01.10.1960 թ.) գույքային իրավունքները՝ ճանաչել նրա սեփականության իրավունքը 04-094-0002-0003 կադաստրային ծածկագրով 0.07 հա մակերեսով տնամերձ հողամասի, հողամասին կից ավել օգտագործվող 0.0078 հա հողատարածքի և այդ տնամերձ հողամասում կառուցած շինությունների՝ կիսակառույց բնակելի տան, պահեստի նկատմամբ՝ համաձայն հողամասի և շինությունների հատակագծի, տրված «Կարեն Մաչանյան» Ա/Ձ-ի կողմից ըստ որակավորման թիվ 0244 վկայականի: Վերականգնումը կատարվում է անհատույց սեփականության իրավունքով:
2. Բնակելի տանը և հողատարածքին տրամադրել հասցե. Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզ, գյուղ Փարաքար, Արցախ թաղամաս, 4-րդ փողոց թիվ 13 բնակելի տուն:
3. Սույն որոշումից բխող գույքային իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանման կողմից:

4.Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի ղեկավարի 2021 թվականի նոյեմբերի 16-ի «Բնակելի տան նկատմամբ գույքային իրավունքները վերականգնելու մասին» N 258-Ա որոշումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Պ/Կ ՏԻԳՐԱՆ ԱՎԵՏԻՍՅԱՆ

2021 թ. նոյեմբերի 25

գ.Փարաքար